Վահան Թոթովենց

Մի կարճ և պարզ պատմություն

Նվեր ամերիկահայ բանվորներին

Երբ գարեջրի սառը բաժակները դատարկեցինք, իմ բարեկամը երկար մի շունչ քաշեց, հոգնության մի երկար շունչ, որ կարծես ծնունդ է առնում ճարճատող ոսկորների խորքից:

Երևի ճանապարհորդությունը քեզ շատ է հոգնեցրել,Պիտր, ասացի, մի՞թե երրորդ կարգով եկար:

Ո՛չ, պատասխանեց Պիտրը, Նյու-Յորքից մինչև Պոլիս և Պոլսից մինչև Նյու-Յորք ճանապարհորդել եմ առաջին կարգով, հանգիստ, ուրախ և առողջ:

Բայց քո հոգոցը լայն հոգնություն է արտահայտում,– հարցրի:

Այո՛, հոգնած եմ, ասաց Պիտրը, հոգով հոգնած եմ, կարծես դատարկված եմ, անսահման պարապություն եմ զգում:

Թուխ գարեջրի երկրորդ բաժակը դատարկեց Պիտրը և աչքերը հառեց հեռուն, կարծես մի պանորամա էր դիտում:

Ի՞նչ ես դիտում, հարցրի:

Անցյալս եմ դիտում, պատասխանեց Պիտրը:

Ես լռեցի: Պիտրը շարունակեց . 90 թվականներին ես փախա Թուրքիայից և երկար թափառելուց հետո հասա Եգիպտոս: 17 տարեկան էի այն ժամանակ,

թվոռուն և ուրախ, ինչպես մի քուռակ: Երկրում նոր էի հնչակյան գրվել, պատրաստ էի ամբողջ կյանքս զոհել այս կուսակցության նպատակների համար Թուրքիայում: Երբ այդ կուսակցության առաջնորդներից մեկնումեկի անունն էին տալիս սիրտս տրոփում էր, տրոփում էր հարգանքից, սիրուց և մի տեսակ բարոյական երկյուղից: Եգիպտոսում իմ ցանկությունն եղավ նրանցից մեկնումեկին անպայման տեսնել և հետո Ամերիկա գնալ: Ուզում էի կենտրոնի գլխավորին տեսնել Լոնդոնում: Այս ցանկությունը այրում էր ինձ, այրում էր ինձ իբրև անզիջելի մի հրդեհ: Գտա նրանցից մեկի հասցեն: Այս հասցեն ինձ տվողը սրբազան մի մասունք մատուցելու արարողություն կատարեց: Նախ առանձնացանք. հեղափոխության ճառ ասաց, երդում անել տվեց, անվերջ խրատներ կարդաց և ամենավերջը՝ համբուրեց հասցեն և ինձ հանձնեց: Ինքնաբերաբար ես էլ համբուրեցի և դրի ծոցս: Դրանից հետո ես ավելի աշխուժացա և կարծես ավելի հզորացա: Նետվեցի առաջին շոգենավը և՝ դեպի Լոնդոն: Վիթխարի Լոնդոնում ես տեսնում էի միայն առաջնորդի կերպարանքը, որ տիրում էր ամբողջ Լոնդոնին . ինձ թվում էր, որ նրա երկար մազերը ջրվեժի նման թափվում են մռայլ Լոնդոնի վրա . ինձ թվում էր, որ Լոնդոնի փողոցներում միայն նա պիտի քայլի և Լոնդոնի ամբողջ աղմուկը ինձ թվում էր իբրև նրա քայլափոխերի աղմուկը: Առաջին ժամին իսկ վազեցի նրա մոտ: Լոնդոնի ետ ընկած փողոցներից մեկումն էր բնակվում այդ մ՛եծ մարդը: Այս հանգամանքը ավելի ահեղ դարձրեց իմ աչքին նրան . նրա համեստությունը ինձ պարզապես երկյուղ ազդեց: Սրտի տրոփյունով զանգը տվի: Մի պառավ կին բաց արեց դուռը: Միսիոնարների մոտ սովորած անգլերենով հարցրի.

- Մեր առաջնորդը տա՞նն է:

Պառավը առանց պատասխանելու գնաց ներս և դուրս գալով՝ ասաց.

Վա՛ղը եկեք, զբաղված է:

Մյուս օրը նորից գնացի: Էլի՝ «վաղը եկեք» ասաց: Գնալով մեր առաջնորդը մեծանում էր իմ աչքին . մինչև անգամ ես մի պահ որոշեցի այլևս չգնալ, չտեսնել նրան, ինձ նման մի խլեզ արժանի էլ չէր նրան տեսնելու: Բայց տեսնելու ցանկությունը կարող էր ինձ այրել և մոխիր դարձնել: Երրորդ օրը էլի գնացի: Այս անգամ պառավն ինձ առաջնորդեց նրա սենյակը: Երբ սենյակ մտա, նա

գլուխը կախ էր արել սեղանի վրա և գրում էր:

Նրա մազերը թափվել էին երեսի վրա, ոչինչ չէր երևում, բացի անտառատեսիլ մազերից:

«Այդ մազերի տակը անպայման հրդեհ կա», մտածեցի:

Գլուխը վեր չբարձրացրեց: Ուրախ էի, անսահման ուրախ էի, որ գլուխը չէր բարձրացնում, որովհետև չխոսած՝ զգում էի, որ լեզուս կապ է ընկել: Երկար սպասելուց հետո նա գլուխը վեր առավ, դանդաղ, ինձ նայեց բոցավառ աչքերով և բացականչեց .

–Օ՛, օ՛, օ՛ . . .

Բարև՛, ընկեր:

– Բարև՛, որտեղի՞ց բուսար:

– Թուրքիայից,– պատասխանեցի:

– Ի՞նչ ես ուզում,–հարցրեց:

– Ուզում եմ ձեզ տեսնեմ և հարցնեմ, թե ի՞նչ եք անում:

Նա ծիծաղեց և պատասխանեց.

Վերջերս մի մեծ ֆաբրիկա ենք բաց արել՝ հրացանների, թնդանոթների և պայթուցիկ նյութերի մի ֆաբրիկա, որպեսզի փոխադրենք Թուրքիա և ազատենք Հայաստանը:

Ես ապուշ կտրած՝ ոչինչ չկարողացա պատասխանել:

Վաղը արի ինձ մոտ, տանեմ, ցույց տամ քեզ այդ ֆաբրիկան:

Թուրքական բարև տվի և հեռացա: Երկրորդ օրը նա ինձ տարավ և ցույց տվեց ինչ–որ մի հսկա շենք, որտեղ պատրաստում էին ամեն տեսակի զենքեր:

- Ահա մենք այս գործով ենք զբաղված: Ամերիկա գնալիս՝ ասա բոլորին, որ օգնեն մեզ, Հայաստանը առանց օգնության չի կարող ազատվել. պետք է օգնեն:

Այս վերջին խոսքը մեխվեց իմ հոգում՝ «պետք է օգնեն»:

Ամերիկա եկա և 15 տարի աշխատեցի օգնել, որպեսզի Հայաստանը ազատվի: Դու ինքդ գիտես իմ քաշած նեղությունները . մարդ հարստությունից հոգնում է, ուր մնաց աղքատությունից: Հոգնեցի աղքատությունից: Այս անգամ Պոլսից վերադառնալիս՝ անցա Լոնդոնից և հանկարծ հիշեցի առաջնորդին և «հնչակյան զինական ֆաբրիկան»: Ցանկացա գնալ և տեսնել այդ ֆաբրիկան: Այդ վիթխարի և հոյակապ շենքը գետնի տակ անցած չէր չինի: Հիշում էի տեղը և փողոցը: Երբ շենքի առաջ կանգնեցի՝ անսահման զայրույթով լցվեցի ինքս ինձ դեմ. չէի կարող ներել ինձ այդքա՛ն հիմարություն, այդքա՛ն ապուշություն: Ցույց արված շենքը անգլիական Զոնսոն գործարանն էր պարզապես, որ «առաջնորդը» կլլեցրել էր ինձ իբրև հնչակյան զինական ֆաբրիկա: Եվ հիմա հոգնած եմ զգում ինձ: Հոգնություն եմ զգում մինչև անգամ հոգու խորքում: Դիտում եմ իմ անցյալս և տեսնում եմ չորացած ծառեր, ապառաժ քարեր, համառ և դեղնավուն փոքրիկ թուփեր լայն դաշտերում:

Պիտրը թուխ գարեջրի երկրորդ բաժակը պարպեց՝ ոգելից ըմպելիքի կարոտագին սարսուռով:

Անցել են տարիներ պատերազմի, արհավիրքի, հեղափոխության և քաղաքացիական կռիվների ահավոր տարիներ: Երկրագնդի քարտեզը փոխել է իր դեմքը: Մեռել են միլիոնավոր աշխատավորներ, զոհ են գնացել համաշխարհային իմպերիալիզմին: Ես մոռացել էի Պիտրին: Չէի կարծում մինչև անգամ, որ նա ողջ է:

Վեց ամիս առաջ ես Պիտրից ստացա մի նամակ:

Ահա այդ նամակի մի կտորը .

Բոստոն, 20 սեպտ. 1927

Իմ հին բարեկա՛մ,

... Վերջապես չերկարեմ, հիմա բոլորովին տարբեր մարդ եմ . նորեն մտել եմ հասարակական գործի մեջ այն եռանդով, ինչ եռանդով որ առաջին անգամ Լոնդոնից Ամերիկա եկա և փող էի հավաքում հնչակյան զինական ֆաբրիկայի համար: ՀՕԿ-ի Բոստոնի մասնաճյուղի անդամ եմ, այժմ գիտեմ, թե հավաքած վազերս ուր են գնում և ի՞նչ նպատակի համար են գործածվում: Խորհրդային Հայաստանից շարունակ ոգեվորիչ լուրեր եմ առնում: Այնտեղ տարվող աշխատանքները ինձ նոր կենդանություն են բերում: Կրկին երիտասարդ եմ զգում ինձ: Հիմա մենք «Զոնսոնի» վրա հիմնված չենք, այլ Հայաստանի աշխատավորական Խորհրդային Հանրապետության վրա: Հիմա եմ զգում, թե ի՞նչ է նշանակում եռանդի և քրտինքի արդյունքի իսկական գործածումը: Համբուրում եմ քեզ: Ուրախ եղիր, որ ապրում ես տգրուկներից, խարդախներից և գողերից մաքրված երկրում:

Հույս ունեմ՝ շուտով կհանդիպենք այդտեղ իրարու:

ՊԻՏԸՐ